Տ. ՎԱՉԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 17, 2024 թ.)

Սիրելինե՛ր, Վեհափառ Հայրապետի եւ մեր հոգեւոր դասի անունից ողջունում ենք ներկայությունը լուսահոգի Գառնիկ Յակուբյանի այրու՝ Անահիտ Յակուբյանի եւ նրա ընտանիքի անդամների ու հարազատների, որոնք Սբ. Գայանե վանքում մասնակցում են Սուրբ Պատարագին: Պատարագի ընթացքում կկատարվի հոգեհանգստյան կարգ՝ Գառնիկ Յակուբյանի մահվան երկրորդ տարելիցի կապակցությամբ:

Գառնիկ Յակուբյանը հավատացյալ եւ մարդկային բարձր արժանիքներով օժտված անձնավորություն էր, որն իր կյանքը բոլորանվեր ընծայեց ընտանիքին, հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետի (դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության շրջանում) հորդորով ստանձնեց Վազգենյան հոգեւոր դպրանոցի կառուցումը, որն այսօր էլ շարունակում է գործել եւ նոր սերունդներ տալ Հայ Եկեղեցուն:

Լուսահոգի Գառնիկ Յակուբյանի բարերարությամբ Մայր Աթոռում ավարտին է մոտենում կաթողիկոսական դամբարանի եւ մոմավառության մատուռի շինարարությունը: Գ. Յակուբյանը մշակութային, գիտակրթական կարեւոր նախաձեռնությունների հեղինակ էր: Մեծ ներդրում ուներ Սփյուռքում հայապահպանության եւ Հայաստանի ու Արցախի զորացման գործում: Նրա կյանքի փիլիսոփայության հիմքում «Ջհոյուս ի հոյոց ֆեզ մատուցանեմք» գաղափարն էր: Աստծուց տրված իմաստությունն ու գործոց հաջողությունը՝ որպես ողորմածություն եւ բարի կամքի դրսեւորում, ինքը վերադարձնում էր ազգին, եկեղեցուն եւ մարդկությանը: Մեծ մարդասեր Գառնիկ Յակուբյանին սիրում եւ ընդունում էին շատերը. ոչ միայն յուրայինները, այլեւ, ըստ ավետարանական խոսքի, ուրիշները:

Ահավասիկ այսօր միացնում ենք բոլորի աղոթքներին նաեւ մեր աղոթքները եւ խնդրում մեր հայրերի Աստծուց, որ իր երկնավոր ու լուսավոր խորաններում ընդունի Գառնիկ Յակուբյանի հոգին եւ խաղաղության մեջ պահի:

Նրան հիշողներիս աղոթքները թող դառնան խունկ ու մոմ եւ ծխան երկնային խորաններում, եւ ընտանիքի անդամները՝ տիկին Անահիտի գլխավորությամբ, մխիթարվեն Սուրբ Հոգով եւ նրա բարի հիշատակով. ամեն:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հաւատամք զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր: Այլեւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք եւ զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական»

(Ժամագիրք)։

Սիրելի՛ հավատացյալներ, քարոզի բնաբանը հուշում է, որ այսօր Մեծ պահքի վեցերորդ կիրակին է, եւ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին նշում է Տիրոջ Գալստյան կիրակին, որը խորհրդանշում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաջին եւ երկրորդ գալուստը: Թեեւ առաջին գալուստը մեղմ եղավ, հեզաբարո, զեփյուռի նման աննկատ, բայց երկրորդ գալուստը լինելու է ահավոր եւ արդար: Թեպետ մարգարեներն ու սաղմոսերգուները նախագուշակել էին Տիրոջ առաջին գալստյան մասին, սակայն մարդկությունը՝ ինչպես հրեաները, այնպես էլ հեթանոսներն ունկնդիր չեղան մարգարեների աստվածատուր տեսիլքներին: Միայն արեւելքի իմաստուն մոգերը տեսան Նրա աստղը եւ եկան երկրպագելու նորածին Աստվածորդուն:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջին գալուստը եղավ բոլորիս ավետիսը, հարության հույսը եւ հավիտենական կյանքը: Հիսուս նրանց ասաց. «Ես եմ Ճանապարհը, եւ Ճշմարտությունը եւ Կեանքը» (Յովհ. ԺԴ. 6): Ինքը՝ Քրիստոս, Ավետարաններում, իսկ Եկեղեցու հայրերն իրենց վարդապետություններում նշեցին, թե ինչպես պիտի լինի Տիրոջ երկրորդ գալուստը:

Սուրբ Գրքում եւ հայրերի վարդապետության մեջ ասվում է, որ Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ նախ երկնքում երեւալու է Նրա նշա-

նը՝ խաչը, որը շարժվելու է դեպի Երուսաղեմ, Գողգոթա, որտեղ խաչվեց Քրիստոս։ Այնտեղ հավաքվելու են հրեշտակները։ Եւ ապա Աստված արտոնելու է, որ մահացածների հոգիները գերեզմաններում նախընթաց միավորվեն մարմինների հետ եւ կենդանիների հետ միասին շարժվեն դեպի Երուսաղեմ, ուր երկնքից հրեղեն կառքերով իջնելու են մարգարեները եւ ապա՝ առաքյալները։ Հրեշտակներն առանձնացնելու են հավատացյալներին՝ անհավատներից։ Հետո Սուրբ Երրորդությունն իջնելու է երկիր. Հայր Աստված՝ Երուսաղեմի տաճար, Որդի Աստված՝ Գողգոթա, եւ Հոգի Աստված՝ Վերնատուն։ Եւ տեղի է ունենալու դատաստանը։

Մինչ այդ նեռը պիտի իջնի երկրի վրա, պիտի վերականգնվի Երուսաղեմի տաճարը, որի տեղում այսօր Ալ-Ակսա մզկիթն է։ Եւ հրեաները մտածելով, որ նա է Քրիստոս, պիտի հավատան, եւ նրանք, ովքեր չհավատան, կդատապարտվեն։ Իսկ Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ կոչնչացվի այդ գազանը, եւ մարդկությանը կբերվի փրկություն։ Ահա այս է օրվա խորհուրդը։

Սիրելինե՛ր, երբ ընթերցում ենք Սուրբ Գիրքը եւ հետամուտ լինում այն ամենին, ինչը Եկեղեցու հայրերն ավանդել են մեզ, երբեմն թվում է, թե այս վարդապետությունը մի տեսակ հեքիաթանման է, հեռավոր եւ մեզ հետ ոչ մի կապ չունեցող մի բան։ Դրա պատճառն այն է, որ ավելի շատ Միշել Նոստրադամուս ենք կարդում կամ Վանգային եւ ուրիշ շատ տեսանողներին ու գուշակներին ենք լսում, բայց քիչ է պատահում, որ հետեւենք Սուրբ Գրքին եւ այն բոլոր խոսքերին ու մտածումներին, որ Հիսուս Ավետարանի, իսկ առաքյալներն առաքելական թղթերի կամ հայտնության միջոցով փոխանցեցին մեզ։

Ինչո՞ւ է այդպես։ Որովհետեւ Եկեղեցու մեջ աղոթակից լինողներիդ կոչում ենք հավատացյալներ, քանի որ մենք հավատում ենք, որ դուք հավատում եք Աստծուն։ Բայց այդ հավատքը որքա՞ն խորություն ու տարածություն ունի. սա է կարեւորն ու էականը։ Որքա՞ն ամուր է այդ հավատքի արմատը, ինչի՞ց է, որ մենք եկեղեցում ասում ենք՝ խաղաղվեցինք, հանգստացանք։ Մենք կարող ենք խաղաղվել եւ հանգստանալ նաեւ դասական երաժշտության համերգասրահներում։ Ուրեմն, ո՞րն է տարբերությունը եկեղեցու եւ հոգեկան խաղաղություն ու բավարարություն պարգեւող դասական երաժշտության համերգասրահի։ Բանն այն է, որ եկեղեցում մենք հաղորդվում ենք մեր Աստծու հետ, այստեղ ոչ միայն խաղաղվում ենք, անդորր ենք գտնում ու հոգեկան բավարարու-

թյուն ենք ստանում, այլեւ ապրում ենք մեր հայրերի Աստծով եւ հաղորդակից լինում Նրան։

Չէի ցանկանա, որ մեր Պատարագի եւ մյուս արարողությունների ողջ հոգեղեն եւ վեհաշուք ծիսակարգերը ստվերեն ձեզնից յուրաքանչյուրի անհատական հավատքը եւ ձեր անձնական անհատական հաղորդակցությունը մեր հայրերի Աստծուն։ Չպիտի սպասենք, որ միայն տաճարում լինի այդ։ Տաճարը, այո՛, այն հոգեւոր կենտրոնն է, որից ստանում ենք այդ ամենը։ Ուրեմն, ինչն է պատճառը, որ այսքան տարիներ քարոզվում են Սուրբ Գիրքն ու քրիստոնեությունը, բայց մարդկության մեջ շարունակվում են ատելությունը, կեղծիքը, բացակայում են սերը, միմյանց նկատմամբ կարեկցանքն ու ողորմածությունը։

Անչափ կարեւոր է, որ ոչ միայն կարողանանք հավատքի կյանքում եկեղեցին ընկալել որպես գեղեցիկ, աղոթաբույր տաճար, այլեւ մենք ինքներս դառնանք տաճար սրբության։ Երբ եկեղեցուց դուրս գանք, մեզ հետ տանենք այդ հոգեւոր տաճարը, մեզ հետ տանենք Ավետարանն ու Շարակնոցը, մեղեդիներն ու աղոթքը եւ դրանք դարձնենք մեր ներքին աշխարհի մի մասը։ Հոգեւոր խորության պակասը գալիս է նաեւ այն բանից, որ մեր ներքին աշխարհի մասին քիչ ենք մտածում։ Մեր ներաշխարհը մի լուսավոր աշխարհ է՝ Աստծու աշխարհը։

Մկրտության ժամանակ ասում ենք, որ դուք դառնում եք Աստծու որդեգիր, Քրիստոսի ժառանգորդ եւ Սուրբ Հոգու տաճար։ Սուրբ Հոգու տաճար է Սուրբ Գայանե վանքը, ուր այս պահին աղոթում ենք։ Ուրեմն որքան կարեւոր է, որ մեր ներսը դարձնենք Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Աստվածամոր տաճար, որպեսզի այդ ապրումները չլքեն մեզ, մնան մեր ներսում, որպեսզի երբ տաճարից դուրս գանք, մեր առօրյա կյանքում չհեռանանք այդ ամբողջ հոգեւոր ապրումներից ու զգացումներից։

Սա էական նշանակություն ունի հավատացյալներիս համար, որովհետեւ մենք պատկանում ենք հայ ազգին եւ Հայ Եկեղեցուն։ Այլ երկրներում ապրող մեր շատ հայրենակիցների հաճախ սպառնում է ուծացումը, որովհետեւ նրանց պակասում է ազգային ինքնության գիտակցությունը եւ պատկանելության զգացողությունը։ Չմոռանանք, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուր, ունենք նաեւ հոգեւոր ինքնության, կրոնական պատկանելության խնդիր։ Մենք պատկանում ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որին հավատում ենք, որտեղ մկրտվում ենք։ Եթե

այդ ինքնության գիտակցության զգացողությունն ունենք, այդ դեպքում ինչո՞ւ ենք հարում տարբեր աղանդների, ինչո՞ւ ենք հեռանում մեր ավանդույթներից, ինչո՞ւ ենք մեղքեր գործում, մի՞թե դժվար է մեզ ապրել քրիստոնեական կյանքով, ինչպես որ մեզ պատգամեց Ինքը՝ Քրիստոս։

Երբ մեղավոր կինը մոտեցավ Հիսուսին, Տերն ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում, գնա՛ եւ այսուհետեւ մի՛ մեղանչիր» (Յովհ. Ը. 11)։ Հիսուս Իր աշակերտներին ասաց. «Եթէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ յետեւից. որովհետեւ ով կամենայ իր անձը փրկել, այն կը կորցնի. եւ ով ինձ համար իր անձը կորցնի, կը գտնի այն։ Ինչ օգուտ կ՚ունենայ մարդ, եթէ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի» (Մատթ. ԺԶ. 24–26)։

Ահա առաքինի կյանքով ապրելու առանցքը. ուրանալ սեփական անձը եւ հանձն առնել դժվարությունների ու խնդիրների հաղթահարումը։ Մենք չենք ուրանում մեր անձը, որովհետեւ կյանքի բարեկեցությունը բոլորիս համար էլ շատ լավ է։ Ցանկանում ենք, որ ինչ-որ մեկը մեր փոխարեն հերոսություն անի սահմանին, ինչ-որ մեկը մեր փոխարեն ավելի հավատք ունենա, ինչ-որ մեկը մեր փոխարեն անի այն, ինչ որ մենք չենք ցանկանում ինքներս անել։ Եթե մենք ինչ-որ մոլությունների ու մոլորությունների մեջ ենք, չենք ձգտում դուրս գալ, որովհետեւ պատրաստ չենք մեր անձը զոհաբերելուն։ Մարդիկ, եկեղեցուց դուրս մեզ տեսնելով, ինչպե՞ս պիտի իմանան, որ մենք Առաքելական Եկեղեցու հետեւորդներ ենք։ Ինչպե՞ս ներկայանանք մեր հայրերի Եկեղեցու հետեւորդներ, եթե չդրսեւորենք քրիստոնեական վարքականոնի բարձր հատկանիշներ։ Հարկավոր է ամենուր դրսեւորել ազնվություն, պատասխանատվություն, արդարություն, քաջություն, կարեկցանք եւ սեր։ Սա շատ կարեւոր է քրիստոնեական հավատքի խորությունը հասկանալու համար։

Եկեղեցու սպասավորներիս ես նմանեցնում եմ մի հնդիկ քրիստոնյայի մորը, որը նամակ է գրում իր որդուն եւ ասում. «Տղա՛ս, ես քո փոխարեն մտնում եմ տաճար, մոմ վառում, աղոթք անում, քո փոխարեն նաեւ ողորմություն տալիս աղքատներին, քո փոխարեն պահք պահում, բայց քո փոխարեն ես չեմ կարող հավատալ, դա դո՛ւ պիտի անես»։ Եկեղեցու սպասավորները քարոզում ու մեկնաբանում են Աստվածաշունչը, ծիսակատարություններով ու խորհրդակատարություններով աղոթակից են լինում հավատացյալներին, հովվական խնամք են ցուցաբերում կարիքավորներին՝ Եկեղեցու կանոնների համաձայն՝ պահելով ավանդությունն-

ներն ու հավատքի ուղղափառությունը։ Մնացածը, սիրելի՛ հավատացյալներ, պիտի կատարեք դուք՝ առաջնորդվելով Հիսուսի պատվիրաններով ու խրատներով։

Այստեղ արդեն գործ ունենք հավատքի խորության հետ։ Ինչպիսին ենք մենք, ինչ պատկանելություն ունենք, ինչ արժեքների ենք դավանում։ Սրանք են մեր ուժն ու զորությունը։ Մեր առաքինի վարքով ու բարի գործերով պատրաստ լինենք Տիրոջ երկրորդ գալստյանը, որովհետեւ երկրորդ գալստյան մասին Հիսուս ասաց. «Բայց այդ օրուայ եւ ժամուայ մասին ոչ ոք չգիտէ. ո՛չ երկնքի հրեշտակները եւ ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթ. ԻԴ. 36)։ Դա լինելու է այնպես, ինչպես Նոյի ժամանակ էր, երբ բոլորը խրախճանքներ էին անում եւ ուրախանում, եւ հանկարծ սկսվեց ջրհեղեղը։ Այս անգամ Տերը գալու է կրակով։ Ուրեմն՝ ինչպիսի՞ կյանք պիտի վարենք, ինչպե՞ս պիտի վարվենք՝ գեհենի հրին ճարակ չդառնալու համար։

Յանկանում եմ ավարտել խոսքս հինարեւելյան մի պատմությամբ։ Ասում են՝ մի իմաստուն առաջնորդ՝ թագավոր, բարձրանում է լեռան գագաթը՝ դիմավորելու Աստծու լույսը։ Այդ ժամանակ լեռան ստորոտին հավաքվում է նրա ժողովուրդը։ Եւ երբ առաջնորդն իջնում է, ժողովուրդն ասում է. «Ո՛վ իմաստուն, դու որ կարդում ես մեր սրտերն ու մեր մտքերը, ասա՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս եւ ուր ենք գնում։ Իմաստուն արքան ասում է. «Դուք աշխարհի լույսն եք, դուք երկնքի աստղերն եք ու տիեզերքը։ Դուք մաքրության տաճար եք, ձեր մեջ է ամբողջ աստվածային լույսը, դուք գալիս եք լույսից, գնացեք ու տարածեք այդ լույսը մարդկանց մեջ»։ Ես միանում եմ իմաստուն առաջնորդին՝ ասելով. երբ բոլորս ելնենք տաճարներից, այս լույսը՝ հավատքի քաղցրությունն ու համը, տանենք մարդկանց, մատուցենք նրանց այդ հոգեւոր մաքուր կերակուրը եւ նրանց պատրաստենք դառնալու Տիրոջ լուսավոր հետեւորդն ու ջերմեռանդ հավատացյալը. ամեն։